

ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաբուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ք X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:

- 1) որեից-, հյուլ-, աշտ-ակիր, առօր-ական (ե)
- 2) հա-շտապ, կա-կափել, պա-ակ, ս-րդել (պ)
- 3) ըն-արմանալ, լեր-անալ, որ-նել, ար-մնի (ո)
- 4) թր-ոց, զի-ել, զո-ի, հաղար- (զ)

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է տառերի և հնչյունների քանակը հավասար:

- 1) անորոշ, հայորդի, վարագառը
- 2) ովքեր, ցածրորակ, կայսերապաշտ
- 3) ապերջանիկ, ակնբախ, ալեվարս
- 4) անընկեր, կտակարան, բարձրանալ

3 Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) Աֆղանստանի իսլամական ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆ, ԺԱՆՆԱ ԴԵ ԱՐԿ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ
- 2) ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ
- 3) ԱՇԽԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՍԱՆԾ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁ
- 4) ԶՈՐԶ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ, ՄԵԾ ՍԱՍԻՍ, ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ

4 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է(ե) ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) իշայծյամ, կիզանուտ, զիսավոր, շիկակարմիր
- 2) իջևանատուն, իրձիգ, զիշակեր, իգական
- 3) շինական, զիրուկ, հանդիսատես, տիրուիի
- 4) վիրահատել, միգամած, կիսանդրի, զիտակցաբար

5 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի թ-ն սխալ տեղադրված (տվյալ տեղում գաղտնավանկ չկա):

- 1) կն(ը)կատի, քն(ը)նել, խմբ(ը)վել
- 2) դռն(ը)բաց, տրտ(ը)մել, չընկ(ը)րկել
- 3) փրկ(ը)վել, կնճ(ը)ռոտ, հանգց(ը)նել
- 4) խառ(ը)նվածք, համ(ը)րանալ, խճճ(ը)վել

6 Ո՞ր դարձվածքի բացատրությունն է ճիշտ:

- 1) **մի սանրի կտավ** –միևնույն գործին նվիրված
- 2) **ուրիշի երգը երգել** –սեփական կարծիք չունենալով՝ ուրիշինը կրկնել
- 3) **հաշվի նստել** – չարաշար պատմել
- 4) **տակմ ու վրա անել** – ասվածը սխալ հասկանալ

7 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) վախճան, սխտոր, զլխարկ
- 2) զավաք, նախիր, խախուտ
- 3) եղջյուր, առաջ, պատվեր
- 4) խավար, կատակ, կոճակ

8 Ո՞ր շարքի բոլոր բառերն ընդհանուր արմատ ունեն:

- 1) տարութերում, տարբեր, մարդատար
- 2) սնապարծ, սնդուկ, սնուտի
- 3) գաղտնածածուկ, ծխածածկույթ, ծածկաթերթիկ
- 4) ծառարուն, բնույթ, բնավեր

9 Ո՞ր շարքի բոլոր բառերը թավ գրված բառի (բառաձևի) հետ բառակապակցություն կազմելիս կարտահայտեն միայն փոխարերական իմաստ:

- 1) *Խոսք* - թքու, կեղտոտ, մահացու
- 2) *զիշեր* - մահահոտ, աստղալից, դավաճան
- 3) *ուժի* - հեզ, սաղարթախիտ, վարսաթափ
- 4) *աչքեր* – կրակոտ, ծով, նշան

10 Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) ատամնաբուժարան, արձակագիր, մանկաբարձուիի, սերտաճում
- 2) պատվարժան, հայրենանվեր, մատնահետք, սրտմտանք
- 3) տնտեսվարություն, ազատամարտիկ, քարանձավ, չփացուցակ
- 4) վերնախավ, դպրոցահասակ, պատմավեավ, բարեկեցիկ

11 Ո՞ր շարքում ածանցավոր թայ չկա:

- 1) սահմանազատել, կարկաչել, տեսնել, մթագնել
- 2) խրանել, դիմչել, շրջապատել, բռնել
- 3) կանչել, մատնել, կանգնել, փայլվել
- 4) կառչել, պոկոտել, կարոտել, վրդովել

12 Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի թայ չկա:

- 1) «Եթե թշնամուն վերացնենք, անպայման կլինի խաղաղություն», - մտածում էր իշխանը:
- 2) Մի՛ կարծիր, թե ահա այս զառիվերը կանցնես, քո վազքը կհեշտանա, էլ հետ չես նայի ու չես տեսնի նրան քո հետևից նայելիս:
- 3) Մի՛ թագավոր կամեցավ գեղեցիկ դարպաս շինել և զարդարել այն զարմանահրաշ նկարներով:
- 4) Մի՛ մարդ խանութ ուներ և գիտեր՝ դրանով կվաստակի իր օրվա ապրուստը:

13 Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:

- 1) Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասարի, հացագործ Սիմոնի տները և բոլորից էլ մերժողական պատասխան ստացավ:
- 2) Գրիգոր Նարեկացու մասին պատմող ամենահավաստի աղբյուրները նրա երկերի հիշատակարաններն են:
- 3) Գետը վարարել էր ու իր հորձանքի մեջ առած ջրլող թռչունների երամը՝ շառաչյունով հոսում էր:
- 4) Հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող գեներալների, իսկ իրեն մոռացան:

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ:**

- 1) տեսաշար, ծաղկանախշ, շարասյուն, ձկնելով
- 2) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար
- 3) հավատարմագիր, մարզատոն, ուղեցույց, հիվանդայց
- 4) մենապար, մեկնակետ, գիսաստղ, ճամփեզր

15 **Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
- 2) Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում. այնտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:
- 3) Թագավորը տագնապած ու հուզախոռվ հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ ընկնեն և սպասեն նոր լուրերի:
- 4) Զորակներում հիմա էլ կա Մանասի տնկած այգին՝ ամենուրեք սպիտակ ու կարմիր վարդերի թիերով:

16 **Ո՞ր նախադասությունը միակազմ չէ:**

- 1) Պտուղդ քաղող չկա, մասրենի, սարի մասրենի:
- 2) Բարելավել վերահսկողական աշխատանքները:
- 3) Ըստ ժողովրդական խոսքի՝ խելոքին՝ գերի, անգետին՝ ոչ սիրելի:
- 4) Մքնշաղ է. անձրևում է միալար:

17 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի:**

- 1) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:
- 2) Զորի բերանին կտրուկ զարիթափի տակ էր կանգնած եղբայրը զայլի համար լարված թակարդը ձեռքին:
- 3) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հազին բանակային շինել էր:
- 4) Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:


18 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Եվրոպայի՝ 1915 թվականի հայոց ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունելը հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին: Այն, որ Եվրոպան 1915 թվականի հայոց ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունեց, հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին:
- 2) Եթանյի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է իր բնակչությունունուուրությամբ: Եթանյի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նրանով, որ իր բնակչությունուուրությամբ բնավորություն ունեն:
- 3) Աղջիկը պարտեզ մտնելուն պես վազում էր դեպի ծաղկանոցը: Հենց որ աղջիկը պարտեզ էր մտնում, վազում էր դեպի ծաղկանոցը:
- 4) Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորի՝ ապարանքից ելնելուն: Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորին, որ ելնելու էր ապարանքից:

19 Ո՞ր նախադասության մեջ հիմունքի պարագա չկա:

- 1) Սեծ երգահանի կերպարը իր՝ Աևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:
- 2) Քրմապետի խորհրդով նա որդուն տարավ աստվածների դրուր:
- 3) Բարելոնի զարդը կախովի այգիներն էին, որոնք, ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի, հիմնվել էին թագավորի սիրելի կնոջ համար:
- 4) Մինչ նա աղմկում էր, հյուրերը շարունակում էին տարակուսած իրար նայել՝ փորձելով հասկանալ աղմուկի պատճառը:

20 Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Ես տեսել եմ այն նկարը, որում սուրբ Թովմասը մատը դրել է Ջրիստոսի վերքի վրա, և հաճախ մտածել եմ այն մասին, որ սերը Աստծու նկատմամբ մարդու ունեցած հավատի հետ համեմատելու դեպքում կարող եմ ասել, որ նման եմ այդ պրին:
- 2) Ես դոդում էի այն մտքից, որ չինի թե նրա մեջ դեռ պահպանված լինի նախկին վախը, և նկատում էի, որ իմ մեջ կատարվող փոփոխությունները կարող էին նրան կասկածամիտ դարձրած լինել, փոխել հիմնովին:
- 3) Ես չի կարողանում ուշադրությունս կենտրոնացնել՝ տեսնելու, թե ինչ է կատարվում բեմի վրա և սրահում. այնքան վշտացած էի, որ, այսպես ասած, ապրում էի միայն ինձնով, և արտաքին աշխարհը չէր ազդում զգայարաններիս վրա:
- 4) Նա պետք է որ ինձ ճանաչեր դեմքով և, բացի այդ, եթե նույնիսկ չճանաչեր, երբ մարդ տեսնում է մեկ ուրիշի՝ իրեն մոտենալը, պարտավոր է նրան գեթ սպասել:

21 Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Կենդանատեսակների դասերի ամբողջական պատկերը ներկայացնելու համար կենսաբանները դրանցում ընդգրկում են նաև իրենց հայտնի անհետացած տեսակները, որոնց թվերը խիստ մոտավոր են:
2. Բանն այն է, որ երրենն բնաջնջվում են ոչ միայն առանձին տեսակներ, այլև ամբողջական ընտանիքներ, նրանց հետքերն անգամ վերանում են. դրան հակառակ՝ զարգացման անընդհատ գործընթացում շարունակ առաջանում են նոր տեսակներ ու ցեղատեսակներ:
3. Կենդանական աշխարհը չափազանց բազմազան է, և դժվար թե մեկը կարողանա հաշվել բոլոր տեսակների ճզգիտ թիվը և ահա թե ինչու:
4. Կենսաբաններին հայտնի է, որ նոր տեսակների առաջացումը նույնքան տարածված է, որքան որոշ կենդանատեսակների վերացումը, իսկ նոր տեսակների հաշվումը ևս խիստ բարդ գործընթաց է:

- 1) 4, 1, 3, 2
- 2) 3, 2, 1, 4
- 3) 4, 3, 1, 2
- 4) 3, 1, 2, 4

22 Ո՞ր տարրերակում անձնավորում կա:

- 1) Ամպերով գոռաց երկինքը զարհուր,
Յավից անձրևը կարկուտի փոխվեց,
Անեծք կայծակեց ու լացեց անհույս:
- 2) Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:
- 3) Հրա՛շը աղջիկ, զիշերների՝ թագուհի,
Ծառագայթող քո աչքերով դու եկար:
- 4) Երազի նման զիշեր է այսօր,
Ու ձյուն է գալիս երազի նման.
Շերմակ են դարձել դաշտերը բոլոր.
Մարմարե զիշեր՝ անեզր, անսահման:

23 Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:

- 1) Սանդուղքի վրա լսվեց վերև բարձրացող ինչ-որ մարդու ոտքերի ձայնը:
- 2) Հնդկեղեգի հիմքի հաստությունը սովորաբար 30 սմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկեղեգներ աճում և հասնում են մինչև 40 մ բարձրության:
- 3) Հաճախ ծառերի բներն այնքան մոտ են լինում միմյանց, որ նման անտառով չես անցնի:
- 4) Գիտնականները հաշվի առան և այն հանգամանքը, որ Եգիպտոսում գինին համարվել է բացառիկ ըմպելիք:

24 Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:

- 1) Ի՞նչ է պահանջվում գյուղի ռեկավարությունից. պահանջվում է, որ քույլ տան ձի պահել:
- 2) Երբ հոգնում էին օրվա հոգսերից, Փաքաքվում էին մի կարիլ մութով, Երկինքներն էին մտնում երազի Եվ հատիկ-հատիկ աստղ էին ուսում:
- 3) Անուշ քույրերով հագեցած թմրաբեր օդից նա քայլում էր հաճելի մի գլխապույտով:
- 4) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն՝ ես զգացի, որ ինձ համար թանկ է բեռնածին, որ մշտապես քրքրվում է քոռերից:

Ե. Զարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բորից,
Որպես ընդիհանուր աղեսից սարսած՝
Զարմացած կզար ինձ այնքան՝ ու մոտիկ
Եվ հանկարծ այնքան՝ ու թանկ ու հարազատ:*

- 1) «Անվերնագիր»
- 2) «Մահվան տեսիլ»
- 3) «Տաղ անձնական»
- 4) «Դանթեական առասպել»

26 Գ. Զոհրապի նովելների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Զարուղնը գողություն է անում՝ ապրուստի միջոց հայթայթելու նպատակով: (*«Զարուղոն»*)
- 2) Հուսեփի աղան մի օր դուրս է գալիս տնից և անհայտ կորչում քաղաքից՝ աղջիկներին թողնելով ծայրահեղ աղքատության մեջ: (*«Ծիսին պարտքը»*)
- 3) Զարդարը, հույսը կտրելով Մարտիրոսի վերադարձից, այլևս երբեք չի գնում այն արտը, որտեղից ճանապարհել էր ամուսնուն: (*«Այրին»*)
- 4) Պերճուիին վերադարձնում է Հակոբոսի նշանը և դառնում սեազգեստ և չամուսնացող աղջիկ: (*«Այինկա»*)

27 Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ուստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»:

- 1) «Ալյիական մանուշակ»
- 2) «Սիրիավ»
- 3) «Խոնարի աղջիկը»
- 4) «Մընաձոր»

28 Տրված հատվածներից ո՞րն է Վ. Տերյանի «Fatum» բանաստեղծությունից:

- 1) Անունդ թող փարոս լինի ինձ
Սուտ կյանքի և դառը մահու դեմ:
- 2) Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխիխոդ ճնշե հողն իմ արյունոտ:
- 3) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
- 4) Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղկներն այնպես նազով են փակվում:

29 Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի «Թմմկաբերդի առումը» պոեմից չէ:

- 1) Պտույտ է գալի ծաղիկ տիրուիին,
Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:
- 2) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին:
- 3) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին.
Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով իրիսն է խոսում:
- 4) Ու կռվի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:

30 **Պնդումներից ո՞րն է սխալ «Սասնա ծռեր» էպոսի («Սատունի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ:**

- 1) Սինչև Խանդութի հետ ամուսնանալը Դավիթը նշանվում է Զմշկիկ Սուլթանի հետ, ումից ծնված աղջիկն էլ հետագայում բունավոր նետով սպանում է հորը՝ Դավիթն:
- 2) Փոքր Սիերը չի կարողանում սպանել Զմշկիկ Սուլթանին՝ հոր վրեժը լուծելու համար, այդ պատճառով փակվում է Ազուավաքարում:
- 3) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
- 4) Փոքր Սիերը, տեսնելով, որ մի քուսմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում, զայրանում է, կովում նրա հետ, ինչի պատճառով էլ հոր անեծքով մնում է անմահ ու անժառանգ:

31 **Հ. Պարոնյանի «Մեծապատիլ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«Կար ժամանակ մը, որ խավարը լուստ դեմ կը կուվեր, տղիտուրյունը զիտուրյան դեմ, անցյալն ապառնիխն դեմ, իրամայականը սահմանականին դեմ, սուրը զրիշի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսր բանջարեղենին դեմ»:

- 1) բանաստեղծի
- 2) քահանայի
- 3) լուսանկարչի
- 4) խմբագրի

32 **Ո՞ր տողն է Նահապետ Քոչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի» հայրենից:**

- 1) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի
- 2) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրոք յերկիր թափեցաւ
- 3) Թուիս ամպն այլ բամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք
- 4) Ժամ-ժամ զիմ դարիպութիւնս Ես յիշեմ ու նստիմ ու լամ

33 **Ո՞ր բառերի բաց քողած տեղում է կրկնակ բաղաձայն գրվում:**

1. անդո-ազիր, 2. խճու-ի, 3. հետաք-ին, 4. եր-ենցաղ, 5. հո-եկ, 6. ու-ալար, 7. հակըն-եմ, 8. տա-ալուծել

34 **Ո՞ր բառերն ունեն մեկից ավելի ածանց:**

1. բամբակենի, 2. առգրավում, 3. անիիշելի, 4. միջնորմ, 5. վարչական, 6. գիտնական, 7. ապուշուրյուն, 8. ուսուցիչ

35 **Ո՞ր նախադասություններում շաղկապ չկա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նա նկատեց որ մեծ գրողի ասածները հիշում են բոլորը:
2. Մտածում էր ուր զնս ում դիմի այդ խնդրանքով:
3. Յուրաքանչյուր ոք կարող է կասկածել սակայն երբեք չիերքել ուրիշներին:
4. Ուշադիր զննեց արկդի պարունակությունը նախքան սենյակից դուրս գալը:
5. Վաղուց ոչնչից չեմ դժգոհում այլ համակերպվում եմ ամենքի հետ:

36 Ո՞ր նախադասություններում քաղաքայի ժամանակածն կա:

1. Վարդանը սենյակի աջ անկյունում ծնկի իջավ՝ բարձրածայն աղոթելով:
2. Սի՛ կանչեք ինձ, հույսի նոր Խոսքերով ինձ մի՛ դյութեք:
3. Այդ խաղատունն է նրան շեղել ճիշտ ճանապարհից:
4. Նա արագ դուրս եկավ քաղաքից՝ քայլելով դեպի դաշտերը տանող խորդութորդ ճանապարհով:
5. Իհարկե, կոչիկն ու արվեստի ստեղծագործությունները տարբեր են, բայց պետք է համոզված լինես, որ բարձրարժեք աշխատանքները երբեք չեն կորչի:

37 Ո՞ր նախադասություններում անջատման անուղղակի խնդիր կա:

1. Առավոտյան զինվորները սպանում են պահակազորին, բացում երկարից դարպասները:
2. Վանքի պարիսպներից դուրս կառուցված այդ շինությունը ճանապարհորդների օրևանն էր:
3. Աչքի միշտ կուշտ կմնա, Հոգի՝ զոհ քեզ հասած քչից:
4. Ոչ մի ժամիք ինձ չի բաժանի իմ անդուլ դարից:
5. Փոքրահասակներից մի քանիսը, որոնք ստվորում էին դպրոցում, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձանից:
6. Քույր ու եղբայր պատուհանից նայում էին հարևան աղյուսե տան խուլ պարապությանը:

38 Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:

1. Թեև քագուիին խնամում էր նրան ամենաքնքուշ հոգածությամբ, և վիրաբույժը կրկնապատկում էր իր ճիգ ու ջանքերը, այնուամենայնիվ արդյունքը հուսադրական չէր:
2. Ես՝ համաձայն մեր նախնական պայմանավորվածության, կմեկնեմ հաջորդ առավոտյան:
3. Թագավորն էր. հրեղեն ճին նստած, ահազին փայլուն քուրը քաշած՝ եկավ և խրոխտ կանգնեց դաշտի մեջտեղում:
4. Աղամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աշքերը չինուացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
5. Լրտեսը՝ խորհրդավոր ուղեկիցը, քարակարկառի արանքից դուրս պրծնելով՝ փախավ դեպի շամբուտը:

39 Բառերից քանիս՝ առում կա:

Ժաղկաշղթա, հոգյակ, գլխավոր, փախստական, գերություն, ոսկերիզ, փոքրոզի, վայրկենական

40 Տրված բառերից քանիսի՝ արմատներից որևէ մեկին կարող է միանալ -ում վերջածանցը և բառ կազմել առանց 2-րդ ածանցի:

Իրահրիչ, սրտահույզ, երկնաձիզ, մարզահագուստ, քաղաքետարան, երկրաշարժ, բազկաթոռ, դրդապատճառ

41 Տրված բառաշարքում իմքը բառի քանի քառածն կա:

ինքնիրեն, իրենով, նրան, իր, ինքնին, ինքնուրույն, ինձնից, ինքնակամ

42

Նախադասություններից քանիստ՝ և ընդգծված ենթակա:

- Եվ դու ինչո՞ւ չես հարցնում, Թէ քո **անունն** ի՞նչ գույն ունի:
- Եկել են, մեր **ինչքո** փախցրել, Սեզ վրա ծախել են մեր իրը:
- Քանաստեղծությունն**, դու պիտի փրկվես Անձարակության համաձարակից:
- Եվ ես շասացի ոչ ոքի **ոչինչ** Եվ ընտելացա մերժումի ցավին:
- Նրանք, որ իմ հացով մեծացան, Չեն ներում դեռ **մերերս**:

43

Նախադասություններից քանիսի՝ դիմաց է ճիշտ նշված, քե որ հայերենով է այն:

- Դըռանս առջև կը նըստիմ միշտ տրխրալիր, Լուր կ'ուզեմ վրադ ամեն կրունկէ՝ որ կ'անցնի: - *արևմտահայերեն*
- Դու տեր համորեն երկնի և երկրի, Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս: - *գրաբար*
- Զիմ եարն ամանաթ կու տամ. ի վարդին մէջն պահեցէք. Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաքս ի տէ՛ր հասուցէք: - *միջին հայերեն*
- Ընդ եղեգան փող ծո՛խս ելանէր, Ընդ եղեգան փող քո՛ց ելանէր, Եւ ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ: - *գրաբար*
- Ոհ, իմ սիրտը կտրատվում է՝ Տեսանելով այսպես սեր Դեպի թշվառ մի հայրենիք, Որ ոտնակոխ եղած էր: - *արևելահայերեն*

44

Նախադասություններից քանիստ՝ ճնկի պարագա կա:

- Նրա նժույգը դանդաղ գնում էր դեպի ճամբար, որտեղ տեղավորված էր Հռոմի մոտակայքում գտնվող հավաքակայանը:
- Նժույգն իր տիրոջ հետ այնքան էր անցել այդ ուղին, որ անսխալ գիտեր ճանապարհը:
- Երբ շուկա մտան, մի վարձկան, գետնին նստած, գարեհաց էր ուտում:
- Յենուուրինները անցուղարձ անելով մտահոգ գրուցում էին:
- Բուռոսը խանդաղատանք էր ապրում այդ տեսարաններից և շնչում ուզմական ճամբարի առնական սուր հոտը:

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել ճիշտ է, Միսալ է, Զգիտես տարրերակներից որևէ մեկը:

1. **Ով** դերանվան միայն եզակի թիվը հոլովածեր ունի:
2. Ոչ բոլոր փոխադարձ դերանուններն են հոլովվում:
3. Բոլոր հոլովվող որոշյալ դերանունները ենթարկվում են գոյականական **ի** հոլովման:
4. Երկրադարձիչ բարդ ստորադասական նախադասություններում հարաբերական դերանունը լինում է կա՞մ գերադաս, կա՞մ ստորադաս բաղադրիչում:
5. Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են գոյականից տարրեր ճնով:
6. **Ես, քո, նա, ինքը** դերանունները եզակի թվում ունեն ճնով միմյանցից տարրերվող սեռական և տրական հոլովածեր:

Բ մակարդակ

46 Ո՞ր նախադասության մեջ ուղղագրական սխալ ունեցող բառ կա:

- 1) Տղամարդը անբարիացակամ վերաբերմունք դրսւորեց իր նոր հարևանների նկատմամբ:
- 2) Հաղթող գահակալի շքախումբը քաղաքամայր հասավ, երբ գարունն արդեն արբունք էր ապրում:
- 3) Հեռուներում նիրիող բարձրաբերձ լեռների շարքում միայն Մասիսի վեհաշուր կատարն էր անհաղորդ տապին:
- 4) Ներքնակողմում պատերը տամկացել էին կտուրի կաթելուց, ողջ մքնուրուտը հազեցած էր պատերի, հատակի և առաստաղի մզլածությամբ:

47 Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) Խանդադատանք, փաղաքշանք, գորովանք, սեթնեքանք
- 2) ակնդետ, սևեռուն, անքթիթ, ուշադիր
- 3) չարախոսել, զրպարտել, բանսարկել, նախատել
- 4) դանդաղ, ծանր, անշտապ, անգայթ

48 Ո՞ր շարքի բոլոր բառերում ու-ի հնչյունափոխություն կա:

- 1) փշածառ, արևմտյան, ընչացք, սնգույր
- 2) ընդեղեն, անրջանք, անգրություն, ըմպան
- 3) հնչակ, մտածել, կատվառյուծ, ձվածեղ
- 4) լրագիր, առևտրական, ընչաքաղց, ջրառատ

49 Ո՞ր տարրերակում բառի սխալ բացատրություն չկա:

- 1) մեղանչել-մեղք գործել, դիպակ-որևէ ստեղծագործության հատված
- 2) աղորիք-հացահատիկ աղալու մերենա, նյութել-որևէ դավանության հետևել
- 3) ճրագալույց-ճրագները հանգնելը, խայտարդետ-զանազան գույներից բաղկացած
- 4) մորի-մորենու պտուղը, երկնուղեց-դեպի երկինք ձգվող ճյուղերով

50 Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի արմատ կա:

- 1) հուշարար, վրեժինդիր, որմնասյուն, գերակշիռ
- 2) նյութապաշտ, հազարարույր, ներաշխարհ, մարդախույս
- 3) հողմահալած, տրամադիր, տիկին, ջերմաշափ
- 4) հարկատու, շրջակա, դավանափոխ, եռաժանի

51 Ո՞ր նախադասության մեջ հարադիր բայ չկա:

- 1) Ամպերը դարձել գթության քույրեր, Զրվեժի վրա ջուր են շաղ տալիս, Որ ուշքի բերեն:
- 2) Զանք է անում ամեն մինը՝ Շուտով տանի, տիրանա:
- 3) Հիմի բացել են հանդես Երգիչները իմ անտես:
- 4) Կանգ առ, հողագնինդ, Ջոն պտույտի մեջ, Թող մայրամուտը մի քիչ երկարի:

52 **Ո՞ր շարքի բոլոր բառագույգերն են կազմված հականիշներից:**

- 1) Երբեք-միշտ, լայն-անձուկ, հավերժ-անընդհատ
- 2) գժուվել-հաշտվել, չափավոր-ծայրահեղ, երաշտային-անձրևային
- 3) կշտամբել-գանահարել, իրազեկ-անտեղյակ, բացասում-հաստատում
- 4) չքմեղ-անաշառ, առատաձեռն-գծուծ, ըմբոստ-հնազանդ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կապեր կամ կապական բառեր:**

- 1) առանց, դեպի, միայն, չափ
- 2) շուրջ, մոտ, այսինքն, ի փառու
- 3) ըստ, ապա, բացի, համար
- 4) մասին, նման, շնորհիվ, վրա

54 **Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերքայ չկա:**

- 1) Նա հավատարիմ էր մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյի ժամանակ լրագիր կարդալուն:
- 2) Այդ հովտի առվից ջուր խմելու հին զալիս եղնիկներ, ուլեր ու զառներ:
- 3) Այդ մենք ենք գալու, որ հինք փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդրույուն:
- 4) Այդ մասին անպայման պետք է հայտնել սպարապետին:

55 **Ո՞ր նախադասության մեջ մակրայ կա:**

- 1) Երբ իշխանուին խոսում էր, վերին կարճ շուրբը մի ակնթարթ արագությամբ իջնում էր, դիպչում ստորին շուրբին և երևան հանում շողացող ժախտը:
- 2) Մարիան մինչև վերջ չսեց և շարունակելով իր մտքերի թելը՝ ինչ-որ հարց տվեց հարսին:
- 3) Իշխան Անդրեյը համբուրեց քրոջը և ասաց, որ նա լացկան է, ինչպես առաջ:
- 4) Անդրեյը որոշեց, որ Լիզան այդ գիշերն էլ կսնցկացնի նույն սենյակում:

56 **Ո՞ր շարքում են միայն ապառնի ժամանակի բայաձեռ:**

- 1) բարձրանամ, չես մոռանա, չանցնենք
- 2) մի՛ լարվիր, դառնամ, չունեմ
- 3) կերգենք, մոտեցի՛ր, վազելու էինք
- 4) չենք վանելու, չխնայեի, ցանկանք

57 **Ո՞ր տարրերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

Ըստ տարրիներ են անցել այն օրից. այժմ իմ արածն իման որոշ չափով արկածա-խնդրություն է բվում, և ես գրականության մեջ գտել եմ իմ նշանարանը:

- 1) **որոշ** – որոշյալ դերանուն, **այժմ** – ժամանակի մակրայ
- 2) **գրականության – ա** ներքին հոլովման գոյական, **գտել եմ** – պարզ բայ
- 3) **իմ** – անձնական դերանուն, սեռական հոլով, **տարիներ** – **ի** հոլովման գոյական
- 4) **արածն** – հարակատար դերբայ, որոշյալ արում, **բվում է** – անկատար ներկա, չեզոք սեր

58 **Ո՞ր նախադասության մեջ և չեղոք, և ներգործական սեռի բայեր կան:**

- 1) Կեսզիշերից անց էր արդեն, երբ վրանի շուրջը ամենքը ննջում էին. անգամ պահակներից ոմանք հենվել էին նիզակներին:
- 2) Երևում էին նաև վրանների շուրջը անցուղաքանդ պահակներ՝ գորշավուն վերաբերյալ հագներին:
- 3) Այդ ստեղծագործությունը բեմականացնելու իմ մտադրությունն իրագործելու համար ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել:
- 4) Այդտեղ ամեն ինչ նույնն էր, ինչ որ տեսել ենք մեր բոլոր գյուղերում. մի փոքրիկ, տխուր եկեղեցի՝ քարերը մամոռուած, բայց հպարտ ու աներեր:

59 **Ո՞ր բարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

- 1) Սինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:
- 2) Այդպես էլ չհմացվեց, թե ինչ եղավ Եգոր Աղամովը:
- 3) Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:
- 4) Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց դեպի սանդուղը:

60 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նա կանգնած նավի առաջամատում գլխիկոր և մտախոհ դիտում էր անդորր ջրի մակերեսույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:
- 2) Օրիորդը ազահորեն ու կլանված լսում էր մարմինը փշաքաղող դյութիչ նվազը որ պատաճի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերով ինչպես քչչալով դուրս է հոսում պաղպաջուն ջուրը աղբյուրի ակունքից:
- 3) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պեսք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
- 4) Դարյա Ալեքսեևնան նա շատ անհանգիստ և դյուրազգաց կին էր նույնպես զայրացավ այդ տեսարանից:

61 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

- 1) Յողակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ, զավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում:
- 2) Մի վայրկյան թվում է՝ խորհրդավոր այս կերտվածքը իսկուն ևեր լեզու է առնելու:
- 3) Որպեսզի հասկանալի լինեն ասածներս, հարկավոր է համբերատար լսել:
- 4) Յոթանասուն տարեկանի մոտ մարդ է նա, հնարել է տարբեր գործիքներ, որոնք բոլորն էլ օգտակար են:

62 **Ո՞ր տարբերակում նշված տեսակի ստորոգյալ չկա:**

- 1) Խավարն է գերել մեր հոգին այսօր, Եվ լրությունը՝ հավետ մահապարտ: (*բաղադրյալ ստորոգյալ*)
- 2) Դուրս եմ գալիս ես, լուս թափառում, Մեզն է գրկում ինձ, հողմը՝ օրորում: (*պարզ ստորոգյալ*)
- 3) Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Ցավ կյանքի մեռնող լույսերից խարված: (*բաղադրյալ ստորոգյալ*)
- 4) Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ, Թող որ սպանեմ ես եղ հրեշին: (*պարզ ստորոգյալ*)

63 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա:**

- 1) Նա գազագած շուռ եկավ և անմիջապես անհետացավ:
- 2) Սայլը ցնցվելով ընթանում էր խորդուրորդ ճանապարհով:
- 3) Ծառերի ճյուղերը գալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:
- 4) Աղջիկը խենթորեն սիրահարվել էր այդ մարդուն և կորցրել սրափ մտածելու ունակությունը:

64 **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Հին զենքերի՝ տեզերի, աղեղների և զրահների տեղ զինապահեստներում շողշողում էին ծիրանը, դեղնը, նուռը և խաղողը:
- 2) Դաշտում տակավին հարյուր տարի սրանից առաջ ոչ մի տուն չկար. կային միայն ունենու ճյուղերից շինված խուլեր:
- 3) Ժամանակի ընթացքում ուազմական նպատակների համար կառուցված ամրոցը, որի պատերի մի մասը ավերվել էր բնական երկրաշարժերից, վերածվել էր շուկայի և ընդարձակ պահեստների:
- 4) Հին գետի ափերով հարավի արեգակի շողով ու բույրով գալիս էին ուղտերի քարավանները՝ բերելով հարավի քաղցրությունն ու գույնը:

65 **Բերված հատվածը միջնադարյան ո՞ր առակից է:**

«Ամրող աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում ու հոգնում, և ապա դու և քո քազավորն ուսում եք: Եթե ես չվաստակեմ, դու և քո քազավորն իսկույժ կմեռնենք»:

- 1) «Այրի կինն ու իշխանը»
- 2) «Եզր և ձին»
- 3) «Աստղեր և լուսին»
- 4) «Ուկի և ցորեն»

66 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ում ո՞վ է դիմում Վասակ Սյունուն՝ ասելով.**

«Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տամում ոգեկան ազատության ու պետության: Ազատության ոչնչացմա՞նը ազատություն: Ունա՞յն է հույսդ, և իզուր՝ ջանքերդ»:

- 1) Վարդան Մամիկոնյանը
- 2) Վահան Ամատունին
- 3) Սովուն Խորենացին
- 4) Ներշապուհ Արծրունին

67 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ պատճենագործված կա:**

Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորազնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտրի Սարգսյանունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելուչ համարեց լոելը:

1. **հոգու ներսը** – տեղի պարագա
2. **պատասխանը**-ենթակա
3. **լոելը** – ուղիղ խնդիր
4. **Սևադան**-ենթակա
5. **խորազնին** – ձևի պարագա
6. **իր** – հատկացուցիչ

Եզիպոսի Լուսոր քաղաքի մոտ գտնվում է Արքաների հովիտը՝ մեծ և նշանավոր փարավոնների դամբարանատեղին: Այստեղ է նաև Թութանհամոնի դամբարանը, որը, հակառակ նրա, որ պատկանում է բոլորից կարծիչնած և փառահեղ գործերով աշքի ջրա-կած փարավոնի, ամենանշանավորն է, քանի որ ամենալավն է պահպանվել:

1922 թ. անգլիացի հնագետ Հովարդ Քարտերի զինավորությամբ Եզիպոսում՝ Նեղոսի ձախ ափին, երկարատև որոնումներից հետո գետնի տակից լուս աշխարհ հանվեց Թութանհամոնի քարակոփ դամբարանը: Հնագետը տեսականորեն հաստատել էր դրա գոյությունը, սակայն դամբարանը չէր հայտնաբերվում: Երբ ամեն ինչ հիմնովին ստուգելուց հետո Քարտերը հուսահատվեց և որոշեց դադարեցնել աշխատանքները, հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարե աստիճանի, և պարզվեց, որ իրենք գտնվում են ստորերկրյա դամբարանի քողարկված մուտքի մոտ: Առաջնային մաքրումից հետո բացվեց մի սրբատաշ պատ՝ լավ պահպանված պատկերներով: Դա դամբարանի մուտքն էր՝ կմքված ամենանշանավոր փարավոնների կնիքներով և Եզիպոսը թշնամիներից պաշտպանող Անյուրիս կոչվող շամ դիմապատկերով:

Գերեզմանը ծածկող արվեստի գործերը այնքան շատ էին, որ դրանք ցուցակագրելու և Կահիրեի եզիպոտական բանգարան տեղափոխելու համար պահանջվեց տասը տարի: Բանն այն է, որ ի տարբերություն շատ այլ փարավոնների դամբարանների՝ այս մեկը նախորդ դարերում չէր հայտնաբերվել Եզիպոսի բնակիչների կողմից ու չէր բաղանվել: Թութանհամոնի ուկե դիմակը համաշխարհային ճանաչում ստացավ՝ որպես Հին Եզիպոտուսի խորհրդատանիշ:

Ծակատագրի հեզնանքով Թութանհամոնը իրականում եղել է Եզիպոտուսի առավել նվազ կարևորություն ունեցող փարավոններից մեկը, սակայն մահվանից հետո դարձել է ամենանշանավորներից մեկը: Նա փարավոն դարձավ ինը տարեկանում և կառավարեց ընդամենը ինը տարի: Շատ հավանական է, որ նրա օրոք իրականացված այնպիսի կարևոր գործողություններ, ինչպիսիք են եզիպոտական աստվածների պանթեոնի ստեղծումը և բազմաթիվ տաճարների կառուցումը, նախաձեռնվել է ոչ թե Թութանհամոնի, այլ նրա խորհրդատունների կողմից:

1. Թութանհամոնի դամբարանի գանձերը պահպում են Լուսորի մոտ գտնվող Արքաների հովտում:
2. Դամբարանի մուտքը հայտնաբերվեց շնորհիվ նրա, որ բանվորներից մեկը նկատեց Անյուրիս կոչվող շամ դիմապատկերը:
3. Թութանհամոնի՝ Եզիպոտուսի ամենահայտնի փարավոններից մեկը դառնալը պայմանավորված է ոչ թե նրա գործունեությամբ, այլ ուրիշ հանգանանքներով:
4. Թութանհամոնի դամբարանը փնտրելիս Քարտերը որոշել էր դադարեցնել աշխատանքները, սակայն մի պատահականություն օգնեց դամբարանը գտնելուն:
5. Թութանհամոնի կառավարման շրջանում Եզիպոտուսը հարստացել է մի շարք ճարտարապետական կոթողներով, որոնցից բոլորը, բացի աստվածների պանթեոնից, կառուցվել են նրա նախաձեռնությամբ:

69 Ո՞ր նախադասություններում սխալ բայաձև կա:

1. Հենց նորություն ունենամ, կկապնվեմ քեզ հետ և կհայտնեմ մանրամասները:
2. Շուտով հայերը տնկեցին թթենի, նոսենի, նշենի, աճեցրին մրգեր ու բանջարեղեն և ցանեցին տեսակ-տեսակ կանաչիներ:
3. Այսպիսի սրտմաշուկ խոհերով համակված՝ մի ժամանակ ես էլ խորհում էի տնից փախնելու, ազգանունս փոխելու մասին:
4. Իզուր մի՛ մտահոգվիր. քեզ բռղող չկա, որ կեսզիշերին տուն գնաս:
5. Գլխի ահավոր ցավը փոքր-ինչ բուլացել էր և հիմա միայն ժամանակ առ ժամանակ էր հիշացնում իր գոյությունը:

70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ծիշտ է, Սխալ է, Զգիտեմ* տարրերակներից որևէ մեկը:

1. Հետևյալը բարդ նախադասություն է. «*Դալուկ դաշտեր, մերկ անտառ, մահացողի տխոր կյանք»:*
2. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկում ենթական և ստորոգյալ միաժամանակ կարող են գեղչված լինել:
3. «*Աշում էր՝ տերևաքափով, արևի նվազ ջերմությամբ»* նախադասությունը անդեմ է:
4. Ե՛վ ենթակա, և՝ ստորոգյալ ունեցող նախադասությունները լիակազմ են:
5. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ բայական և անվանական:
6. Պարզ համառոտ նախադասության մեջ բացի գլխավոր անդամներից որևէ որիշ բառ չի կարող լինել: